

Ձմռանը և Ամանորին նվիրված բանաստեղծություններ



Առաջին փաթիլները

Նազ ու տուգով, օրորվելով
Իրար կողքի, թևանցուկ՝
Փաթիլները ճամփա ընկան
Օդի միջով կամացուկ: Թեթև-թեթև իջնում են վար՝
Պտտվելով անդադար,
Պար են գալիս, խաղում անվերջ
Լայն ու արձակ օդի մեջ:
Ամպը գոչեց. «Արա՛գ իջեք,
Իմ սիրելի՛ բալիկներ,
Զգիտե՞ք, որ կարոտ են ձեզ
Այնքան փոքրիկ մանուկներ»:
Փաթիլները զվարթացան,
Թևին տվին ու անցան,
Մեկիկ-մեկիկ գետին իջան,
Իրար գրկած՝ ձյուն դարձան:
Մանուկները դուրս վազեցին՝
Առած սահնակ ու սղոյան,

Եվ սկսվեց երգ ու ծիծաղ,
Չվարթ խաղերը ճմռան:

Հայրապետ Հայրապետյան

Հյուրը

Կրկին այս մեր դահլիճում
Չվարթ երգեր են հնչում,
Ու եղևնին անտառից
Հյուր է եկել բոլորիս:
Նա դարձել է տոնածառ՝
Փայլփլուն ու լուսավառ,
Եվ կանգնել է շիփ-շիտակ
Իր գույնզգույն զարդի տակ:
Շուտով կգա ծեր պապին՝
Խաղալիքներ շալակին
Եվ ժպիտը իր դեմքին՝
Նվեր կտա ամենքին:

Հայրապետ Հայրապետյան

Ձմեռ պապի

Արի՛, արի՛
Ձմեռ պապի,
Սպիտա՛կ հագի,
Սպիտա՛կ կապի:

Դաշտ ու անտառ,
Գետ ու գետակ,
Այս ամենը
Ա՛ն թևիդ տակ:

Սարում, ձորում
Սուլի՛ր, երգի՛ր,
Հեքիաթ ասա
Հետաքրքիր:

Գցիր կամուրջ,
Փռիր կարպետ,
Այ անուրագ,
Անձեռ վարպետ:

Աթաբեկ Խնկոյան

Ձմեռ

Ճառը մերկացավ,
Չրկվեց տերևից,
Ձյունն փաթիլներ
Իջան վերևից:

Ձյուն ու ցուրտ եկան,
Առու, գետ լռեց,
Իր արծաթ գորգը
Ձմեռը փռեց:

Ձյունը ծնկահար
Նստեց մեծ ճամփին,
Սպիտակ հյուսերը
Կիտեց գետափին:

Աթաբեկ Խնկոյան

Նկարիչ

Օյ, օյ, օյ, բուք-բորան
Եկավ ծածկեց պատուհան:
Նկարիչ է, նկարիչ,
Ոչ ձեռք ունի, ոչ գրիչ,
Ոչ ներկ ունի և ոչ տուփ,
Նկարում է ծառ ու թուփ.
Ճաղկենկար է անում,
Ապակու վրա նկարում:
Այ, էդպես է բուք-բորան,
Կուզե՞ս տեսնել դու նրան:
Թե տղա ես, դուրս գնա,

Քիթոյ աշտեղ կմնա:

Աթաբեկ Խնկոյան

Եղևնի

Գուևատ աշուն է,
Էլ չկա թռչուն,
Քամու թևերին
Տերևն է թռչում:

Միայն եղևին
Աշտեղ՝ խոր հովտում,
Կանաչ է հագել,
Աշնան դեմ ժպտում:

Աթաբեկ Խնկոյան

Նոր տարվա նվերը

-Ա՛յ Նոր Տարի, գա՛լի բարի,
Դու մեզ նվեր ի՞նչ ես բերել:
Քաղցր խնձոր, չի՞ր ու սալո՞ր,
Թե տա՞նձ ու նու՞ռ, չամիչ մի բո՞ւռ...
-Ձա՛ն, մանուկներ՛ր, թո՛ղ ձեզ մրգեր
Մայրիկը տա՛, ինձ մոտ չկա:
Ես ձեզ համար մի-մի հարմար
Գիրք եմ բերել՝ մեջը պատկեր:
Սրա նման ուրիշ մի բան
Էլ չգտա՝ իբրև ընծա:
Գիրքն է տալիս մտքեր բարի,
Երգ, ցնծություն, խաղեր սիրուն:

Հայրապետ Հայրապետյան

Շնորհակալություն Ձմեռ Պապիկին

Վաղ առավոտյան երբ որ արթնացա,
Տոնածառի տակ մի կապոց տեսա,

Ձմեռ պապիկն էր ինձ համար բերել
Ու իմ Նոր տարին շնորհավորել :
Այնպես եմ ուզում Ձմեռ պապիկին
Ասել բարձրածայն. – Շնորհակալ ու թյուն...
Բայց հեռախոսի համարն եմ փնտրում,
Գրքում չեմ գտնում:

Սուրեն Սուրադյան

Եղևնին

Անտառից եկած կանաչ եղևնին,
Հիշում է կանաչ իր ընկերներին,
Արահետներն է հիշում ծյունի տակ,
Հիշում է բացատն ու բուքն սպիտակ:
Երկինքն է հիշում իր գլխի վերև,
Եվ իր մայր անտառն ասեղնատերև,
Հովերն է հիշում նա գարնանային,
Որ իրեն այնպես օրորում էին:
Վաղորդյան ցողի գոհարն է հիշում,
Եվ մայրամուտի թևերն աբրեշում,
Հիշում է սոսափն ամեն մի ծառի,
Խարույկն է հիշում անտառապահի:
Հիշում է բուլորն ու չի ափսոսում,
Որ էլ անտառի երգը չի լսում,
Ինչո՞ւ ափսոսա, երբ իր թևերին
Գարունն է բերել երեխաներին,
Գարունն է բերել այս ձմռան օրով
Եվ տունն է մտել կանաչ շորերով.
Ե՞րբ է նա այսպես գուգվել, զարդարվել
Եվ մարդկանց այսքան հրճվանք պատճառել,
Ե՞րբ է նա եղել այսքան երջանիկ
Ու ե՞րբ է տեսել այսքան խաղալիք:
Ե՞րբ են նրա մոտ այսքան մանուկներ
Երգել ու պարել մինչև ուշ գիշեր...
Չարդարանքներով, աստղերով իր պերճ
Կանգնել է ուրախ մանուկների մեջ,

Այնպես հպարտ է նայում աշխարհին,
Կարծես հենց ինքն է բերել Նոր տարին:

Համո Սահյան

Նոր Տարի

*Խոսք՝ Ն. Ստեփանյանի
Երաժշտ.՝ Գ. Չթչյանի*

Չարդարվել ես տոնածառ,
Դարձել շքեղ ու պայծառ,
Լույսերիդ մեջ տոնական
Խնդրես մանկան ես նման:

Կրկներգ.

Նոր տարի է, նոր տարի,
Հանդես երգի ու պարի,
Բերել է մեզ նվերներ
Ձմեռ պապին մեր բարի:

Հեռուներից ես եկել,
Քո մայր անտառն ես թողել,
Որ քեզ չզգաս դու մենակ,
Շուրջդ երգ, պար ես բռնել:

Կրկներգ.

Նոր տարի է, նոր տարի,
Հանդես երգի ու պարի,
Բերել է մեզ նվերներ
Ձմեռ պապին մեր բարի:

Բռնենք շրջան ծափ-պարի,
Թող ծիծաղը վարարի,
Քեզ էլ մեր լավ տոնածառ,
Շնորհավոր Նոր տարի:

Կրկներգ.

Նոր տարի է, նոր տարի,

Հանդես երգի ու պարի,
Բերել է մեզ նվերներ
Ձմեռ պապին մեր բարի: